ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Նորածիլ Հաւատք
Blooming Faith

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱՄՍԱԹԵՐԹ | ԹԻՒ 12

Ապրիլ, Մայիս • 2026

ՏՕՆԵՐ
FEASTS & CELEBRATIONS

4 Ապրիլ | April 4
Ճոռագալոյց Ս. Զատիկի - Easter Eve

5 Ապրիլ | April 5
Զատիկ՝ Տօն Յարութեան Քրիստոսի - Celebration of the Resurrection of our Lord Jesus Christ

6 Ապրիլ | April 6
Յիշատակ Մեռելոց - Memorial day

7 Ապրիլ | April 7
Աւետումն Սրբուհւոյ Աստուածածնի - Annunciation of the Virgin Mary

12 Ապրիլ | April 12
Կրկնազատիկ (Նոր Կիրակի) - New Sunday

19 Ապրիլ | April 19
Աշխարհամատրան Կիրակի (Կանաչ Կիրակի) - Green Sunday

24 Ապրիլ | April 24
Հայոց Ցեղասպանութեան Սուրբերու Տօն - Armenian Genocide Saints Day

26 Ապրիլ | April 26
Կարմիր Կիրակի - Red Sunday

3 Մայիս | May 3
Տօն Երեւման Սուրբ Խաչի - Feast of the Apparition of the Holy Cross

14 Մայիս | May 14
Տօն Ճամբարձման Յիսուս Քրիստոսի - Feast of the Transfiguration

17 Մայիս | May 17
Երկրորդ Ծաղկազարդ - Second Palm Sunday

24 Մայիս | May 24
Հոգեգալուստ - Pentecost

28 Մայիս | May 28
Տօն Հայաստանի Հանրապետութեան Ա. Անկախութեան - Armenia's First Independence

ԱՄՍՈՒԱՆ ԱՂՕԹՔ
PRAYER OF THE MONTH

Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլի տան եւ ի գնալի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: :

O Christ, guardian of all, May your right hand guard and shelter me, day and night; while at home and while traveling; while I am sleeping and while I am awake, so that I may never falter. Have mercy upon your creatures, and on me, a manifold sinner.

ՈՍԿԻ ՀԱՄԱՐ
VERSE OF THE MONTH

Մեծագոյն սէրը այն սէրն է, որով մարդ ինքզինք կը զոհէ իր բարեկամներուն համար։

Greater love has no one than this: to lay down one's life for one's friends. John 15:13



ՄԵՐ ՄԱՂԹԱՆՔԸ | OUR WISHES

Թող Սուրբ Հոգին լեցնէ ձեր սիրտը Աստուծոյ խաղաղութեամբ, իմաստութեամբ եւ զօրութեամբ։ Սուրբ Հոգեգալստեան տօնին առիթով կ՛աղօթենք, որ Աստուած նորոգէ ձեր հաւատքը, առաջնորդէ ձեր քայլերը եւ օրհնէ ձեր կեանքը Իր երկնային շնորհքով ու սէրով։

«Բայց երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ, զօրութեամբ պիտի լեցուիք եւ իմ վկաներս պիտի ըլլաք՝ Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, եւ մինչեւ աշխարհի ծայրամասերը» (Գործք Առաքելոց 1.8)

May the Holy Spirit fill your heart with His peace, wisdom, and strength. On the celebration of the Holy Feast of Pentecost, we pray that God renews your faith, guides your path, and blesses your life with His heavenly grace and love.

“But you will receive power when the Holy Spirit has come upon you.”
— Acts 1:8

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱԺԻՆ
YOUTH CORNER

ԻՄ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Անունս Անի Ասդուրեան է։ Փոքր տարիքէս ի վեր, եկեղեցին միշտ շատ կարեւոր տեղ ունեցած է իմ կեանքիս մէջ։ Մանկութենէս սկսած եմ մասնակցիլ Կիրակնօրեայ դպրոցին, եկեղեցական ձեռնարկներուն եւ զանազան ծառայութիւններու։ Մինչեւ այսօր, ես շատ ուրախ եմ, որ տակաւին կը շարունակեմ իմ մասնակցութիւնս բերել եւ ծառայել մեր եկեղեցւոյ մէջ։

Երբ փոքր էի, Կիրակնօրեայ դպրոցը ինծի համար վայր մըն էր, ուր կը սորվէի Աստուծոյ մասին, կը հանդիպէի ընկերներուս եւ հաճելի ժամանակ կ՛անցընէի։ Տարիներու ընթացքին, անիկա դարձաւ աւելի քան դասարան մը։ Ան դարձաւ վայր մը, ուր ես մեծցայ, սորվեցայ եւ աւելի մօտեցայ իմ հաւատքիս։ Այսօր, շատ հաճելի է տեսնել, թէ ինչպէս ես ալ կրնամ օգնել փոքրիկներուն նոյն ձեւով, ինչպէս ուրիշներ օգնեցին ինծի երբ ես փոքր էի։

Ես նաեւ կը ծառայեմ մեր եկեղեցւոյ տարբեր գործունէութիւններուն մէջ, ինչպէս «Մեղրիկ Բարիքեան» կրտսերաց դպրաց դասին եւ ամառնային ճամբարին։ Այս փորձառութիւնները ինծի սորվեցուցած են պատասխանատուութիւն, համբերութիւն եւ առաջնորդութիւն։ Ամէնէն գեղեցիկ մասը ուրիշներուն օգնելն ու փոքրիկներուն ուրախութիւնը տեսնելն է։

Եկեղեցին ինծի համար երկրորդ տուն մըն է։ Զոն գտնուող մարդիկը ընտանիքի պէս են, եւ անոնք միշտ սիրով քաջալերած են զիս։ Ես շատ շնորհակալ եմ, որ մանկութենէս ի վեր այս համայնքին մաս կազմած եմ, եւ կը յուսամ շարունակել ծառայել ու օգտակար ըլլալ երկար տարիներ։

Անի Ասդուրեան

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՉՈՐՍ ՏՕՆԵՐԸ

THE FOUR FEASTS OF THE HOLY CROSS

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին Ս. Խաչին նուիրուած չորս տօներ ունի որոնք են՝ Երեւումն Ս. Խաչի, Գիւտ Խաչի, Վերացման Ս. Խաչի, եւ Վարագայ Ս. Խաչի տօները:

Այս հատորին մէջ պիտի խօսինք Երեւումն Ս.Խաչի տօնին մասին. Մենք Հայերս այս տօնը կը տօնենք Ս. Յարութեան տօնին հինգերորդ կիրակին, իսկ Յոյները՝ Մայիս 7-ին: Այս տօնը յատուկ է միայն Հայերուն եւ Յոյներուն:

Այս տօնը յիշատակն է Երուսաղէմի մէջ Ս. Խաչի նշանին երեւման: Կիւրեղ Երուսաղէմացի հայրապետի օրով, 351 թուին Մայիս 7ին, Ս. Խաչը ցերեկ օրով կ'երեւի, Երուսաղէմի Գողգոթայէն մինչեւ Ձիթենեաց լերան երկնակամարը ծածկելով: Նկարագրեցէք ձեր մտքերուն մէջ կ'արծես ճիշդ ծիածանի մը պէս:

Ս. Խաչի նշանը կ'երեւի թէ' քրիստոնեաներուն եւ թէ' ոչ քրիստոնեայ օտարներուն. Հաւատացեալները երբ կը տեսնեն այս հրաշալի երեւոյթը, եկեղեցի կը մտնեն ու կը փառաբանեն զԱստուած այս դէպքին համար: Կիւրեղ Երուսաղէմացի Հայրապետ նամակ մը կը գրէ ուղղուած Բիւզանդիոնի Կոստանդիանոս կայսրին, որուն մէջ կը նկարագրէ այս դէպքը. Կիւրեղ հայրապետի այս գրութիւնը թարգմանուած է հայերէնի եւ կ'ընթերցուի Երեւման Ս. Խաչի տօնին առթիւ: Մինչեւ այսօր հայ հաւատացեալները կը յիշեն այս տօնը:

The Armenian Apostolic Church has four feasts dedicated to the Holy Cross, which are: the Feast of the Apparition of the Holy Cross, the Discovery of the Cross, the Exaltation of the Holy Cross, and the Feast of the Holy Cross of Varak.


In this article, we will speak about the Feast of the Apparition of the Holy Cross. Armenians celebrate this feast on the fifth Sunday after the Feast of the Holy Resurrection (Easter), while the Greeks celebrate it on May 7. This feast is unique only to Armenians and Greeks.

This feast commemorates the appearance of the sign of the Holy Cross in Jerusalem. During the time of Patriarch Cyril of Jerusalem, in the year 351, on May 7, the Holy Cross appeared in broad daylight, stretching across the sky from Golgotha in Jerusalem to the Mount of Olives, covering the heavens just like the shape of a rainbow.


The sign of the Holy Cross appeared both to Christians and to non-Christians. When the faithful witnessed this miraculous event, they entered the church and glorified God for this occurrence. Patriarch Cyril of Jerusalem wrote a letter addressed to Emperor Constantius of Byzantium, in which he vividly described this event. This writing of Patriarch Cyril was translated into Armenian and is read on the Feast of the Apparition of the Holy Cross. To this day, Armenian believers continue to commemorate this feast.



THE RESURRECTION OF CHRIST



ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ



ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

THE ARMENIAN GENOCIDE

Հայոց Ցեղասպանութիւնը շատ տխուր դէպք մըն էր, որ տեղի ունեցաւ Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին: Ան սկսաւ 1915 թուականին Օսմանեան Կայսրութեան մէջ, որուն մէկ մասը այսօրուան Թուրքիան է: Հայերը քրիստոնեայ ժողովուրդ մըն էին, որոնք հազարաւոր տարիներէ ի վեր կ՚ապրէին այդ շրջանին մէջ: Պատերազմի ընթացքին Օսմանեան կառավարութիւնը հայերը մեղադրեց կայսրութեան խնդիրներուն համար եւ անարդար կերպով վարուեցաւ անոնց հետ:

Շատ հայեր ստիպուեցան լքել իրենց տուները եւ երկար ճամբորդութիւններ կատարել անապատներու եւ դժուար վայրերու մէջ: Անոնք շատ քիչ ուտելիք, ջուր եւ ապաստան ունէին: Ընտանիքներ բաժնուեցան, եւ շատ մարդիկ հիւանդացան, անօթեցան կամ վիրաւորուեցան: Ուրիշներ վնասուեցան կամ սպաննուեցան զինուորներու եւ յարձակող խմբաւորումներու կողմէ: Մօտաւորապէս 1.5 միլիոն հայեր մահացան այս սարսափելի ժամանակաշրջանին ընթացքին:

Շատ երեխաներ կորսնցուցին իրենց ծնողները, իսկ վերապրողները ստիպուեցան տեղափոխուիլ ուրիշ երկիրներ՝ նոր կեանք մը սկսելու համար: Հայկական համայնքներ կազմուեցան աշխարհի տարբեր վայրերու մէջ, ներառեալ Գանատան, Ամերիկայի Միացեալ Նահանգները, Ֆրանսան եւ Միջին Արեւելքը: Չնայած մեծ վիշտին, հայ ժողովուրդը շարունակեց պահպանել իր լեզուն, մշակոյթը, երաժշտութիւնը եւ աւանդութիւնները:

Այսօր շատ երկիրներ եւ կազմակերպութիւններ կը ճանչնան Հայոց Ցեղասպանութիւնը եւ կը յիշեն բոլոր անոնք, որոնք տառապեցան կամ զոհուեցան: Ամէն տարի Ապրիլ 24-ին հայերը ամբողջ աշխարհով մէկ կը յարգեն զոհերուն յիշատակը եւ կը պատմեն պատմութիւնները, որպէսզի պատմութիւնը չմոռցուի:

Հայոց Ցեղասպանութեան մասին սորվիլը կ՚օգնէ մարդիկուն հասկնալ արգանքի, խաղաղութեան եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան կարեւորութիւնը:

The Armenian Genocide was a tragic event that happened during World War I. It began in 1915 in the Ottoman Empire, which included the land that is now called Türkiye. Armenians were a Christian group who had lived in the region for thousands of years. During the war, the Ottoman government blamed Armenians for problems in the empire and treated them unfairly.

Many Armenian people were forced to leave their homes and go on long marches through deserts and difficult areas. They were given very little food, water, or shelter. Families were separated, and many people became sick, hungry, or injured. Others were hurt or killed by soldiers and groups attacking them. About 1.5 million Armenians died during this terrible time.

Children lost their parents, and many survivors had to move to other countries to build new lives. Armenian communities spread around the world, including to places like Canada, the United States, France, and the Middle East. Even though they faced great sadness, the Armenian people worked hard to keep their language, culture, music, and traditions alive.

Today, many countries and organizations recognize the Armenian Genocide and remember the people who suffered and died. Every year on April 24, Armenians around the world honor the victims and share stories so history will not be forgotten. Learning about the Armenian Genocide helps people understand the importance of respect, peace, and protecting human rights for everyone.



ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄ
ACTIVITY TIME





Իւրաքանչիւր ձեւ ունի իրեն յատուկ թիւը:
Փորձէ գումարել ձեւերուն թիւերը և ամբողջացուր տուփիկները ճիշդ պատասխաններով:

Each shape has its own special number.
Add the numbers of the shapes and write the correct answers on the line provided.

1 2 3 4 5 6 7 8 9 10

🕯️ + 🕯️ + ⛪ = _____

🟥 + 🟦 + 🟧 = _____

🔔 + ⛪ + 👶 = _____

🤍 + 🕊️ = _____

🟥 + 🤍 + 🟦 + 🔔 + 🟧 = __

Գունաւորէ՛ պատկերը նախասիրած գոյներովդ:
Colour the picture using your favourite colours.



SOLUTIONS TO JANUARY/FEBRUARY/MARCH ISSUE'S ACTIVITIES

M R C E Y : MERCY

M A E I S S H : MESSIAH

P A T I L E : PILATE

C H R U C H : CHURCH

R M O A N : ROMAN

G N T E S H E A M E : GETHSEMANE

A E N H V E : HEAVEN

Holy week
Find and circle the words






GOOD CHOICE	POOR CHOICE
pray before bed	yell at my brother/sister
share my snack	lie to avoid getting in trouble
help someone who is sad	disobey my parents
listen during church	
be kind to everyone	
say please and thank you	



Նշուած թիւերուն և ուղղութիւններուն համաձայն օգնէ՛ աշակերտներուն որպէսզի Ծիծեռնակաբերդ հասնին:

Follow the given numbers and directions to help the students reach Dzidzernagapert.



Match the Picture to the Correct Word.
Նկարը ճիշդ բառին հետ միացուր:



Ներկան



Անցեալը



Ապագան



Անմոռուկ



Յավերժութիւն

Put the Pentecost Story in Order- Number the events from 1–6.
Դասաւորէ՛ Հոգեգալստեան Պատմութիւնը — Թուագրէ՛ դէպքերը 1–6

___ Jesus went up to heaven - Յիսուս բարձրացաւ երկինք
___ The Holy Spirit came at Pentecost - Հոգեգալուստի ժամանակ Սուրբ Հոգին եկաւ
___ Jesus died on the cross - Յիսուս խաչին վրայ մահացաւ
___ Jesus appeared to His disciples - Յիսուս իր աշակերտներուն երեւցաւ
___ The disciples shared God's message - Աշակերտները Աստուծոյ պատգամը տարածեցին
___ Jesus rose from the dead - Յիսուս մեռելներէն Յարութիւն առաւ

Fill in the blanks - Ամբողջացո՛ւր Պակսող Բառերը:

Jesus died on the _____.
Three days later, Jesus _____ from the dead.
Jesus went up to _____.
At Pentecost, the Holy _____ came to the disciples.
Jesus said, "I am with you _____."

Յիսուս մահացաւ _____ի վրայ:
Երեք օր ետք, Յիսուս _____ :
Յիսուս բարձրացաւ _____:
Հոգեգալստեան օրը, Սուրբ _____ եկաւ աշակերտներուն վրայ:
Յիսուս ըսաւ . «Ես ձեզի հետ եմ _____»:

Ծաղկազարդ, Սուրբ Զատիկ
Զատկուայ հաւկիթներու գունաւորում (Croc-a-doodle)
Զաղկազարդի զարդարուած մոմերու վաճառում



JOKE OF THE MONTH | ԾԻԾԱՂ

Q: Why didn't Noah go fishing?

A: Because he only had *two worms*..



Մեր փոքրիկները կը հարցնեն ...

Answered by Very Rev. Fr. Karekin Shekherdemian

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՄԱՅՐԸ ՈՎ ԷՐ

Սուրբ Աստուածածնի մայրը Սուրբ Աննան էր, իսկ հայրը՝ Սուրբ Յովակիմը։ Երկուքն ալ Աստուծոյ հաւատարիմ անձեր էին։ Անոնք երկար տարիներ զաւակ չունէին, բայց միշտ աղօթեցին եւ վստահեցան Աստուծոյ։ Աստուած լսեց իրենց աղօթքը եւ անոնց պարգեւեց Մարիամը, որ հետագային դարձաւ Յիսուս Քրիստոսի մայրը։

ԻՆՉ Է ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵՒ ՍՈՒՐԲԻՆ ՄԻՋԵՒ

Մարգարէն Աստուծոյ կողմէ ընտրուած անձ մըն է, որ Աստուծոյ պատգամը կը փոխանցէ ժողովուրդին եւ երբեմն ապագային մասին կը խօսի։ Բայց աւելի կարեւորը՝ մարդիկը կը հրաւիրէ Աստուծոյ կամքին համաձայն ապրելու։

Սուրբը այն անձն է, որ իր կեանքը Աստուծոյ նուիրելով օրինակելի քրիստոնէական կեանք կ՛ապրի։ Ուրեմն մարգարէն Աստուծոյ խօսքը կը փոխանց, իսկ Սուրբ սուրբ կեանք մը ապրողն է

Որոշ մարդիկ կրնան միաժամանակ թէ՛ մարգարէ եւ թէ՛ սուրբ ըլլալ, ինչպէս՝ Եղիա մարգարէն կամ Եսայի մարգարէն։



ՍԻՐԵԼԻ ՓՈՔՐԻԿՆԵՐ՝

Ձեզի առիթ պիտի տանք ձեր հարցումները հարցնելու մեր եկեղեցւոյ հովիւներուն: Կրնաք ձեր հարցումները Յիսուսի, Քրիստոնէութեան եւ մեր եկեղեցւոյ մասին ուղղել հետեւեալ ե-նամակին sundayschool@stmarytoronto.ca եւ մեր յաջորդ ամսուան թերթին մէջ պատասխանը կը ստանաք:

ATTENTION KIDS:

Have you ever had questions about Jesus, Christianity or our church? Here is your chance to ask our church leaders. Just email your questions to: sundayschool@stmarytoronto.ca and your questions will be answered in our next issue.

ԿԸ ՓԱՓԱՔԻ՞Ք ՄԱՍՆԱԿՑԻԼ «ՆՈՐԱԾԻԼ ՀԱՒԱՏՔ» ԱՄՍԱԹԵՐԹԻՆ

Ձեր ե-նամակները կրնաք ուղղել sundayschool@stmarytoronto.ca եւ մեր յաջորդ ամսուան թերթին մէջ կը ներառենք ձեր յօդուածը

CONTRIBUTE TO "BLOOMING FAITH"

Would you like to write an article for our next issue? send us an email at sundayschool@stmarytoronto.ca and your article can be featured in our next issue!

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ
THANK YOU

ԱՄՍԱԹԵՐԹԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Թամար Քէօշկէրեան Թոզճեան,
Ռուպինա Քէօշկէրեան Քէշիշեան, Մանօ Ճէնանեան,
Մարալ Խաչատուրեան, Փաթիլ Մկրտիչեան,
Նորհայկ Աթանոսեան

SPECIAL THANKS TO:

Very Rev. Fr. Karekin Shekherdemian
Archpriest Rev. Fr. Datev Mikaelian
Baron Khatchig Dedeyan
St. Mary Armenian Apostolic Church Board of Trustees
Creative Director: Tamar Keushkerian-Tozjian
Artistic Director: Roubina Keushkerian-Keshishian
Newsletter Committee

ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՁԵՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ
THANK YOU FOR YOUR CONTINUED SUPPORT

If you'd like to support our newsletter, you can send a donation of any amount to
stmaryarmchurch@yahoo.com
(please specify "Sunday School")
or by calling the Church Office: 416-493-8122

Թորոնթոյի Ս.Աստուածածին Հայց. Առաքելական եկեղեցւոյ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Կիրակնօրեայ դպրոցի դասաւանդութիւնը տեղի կ'ունենայ
Կիրակի օրերը Առաւօտեան ժամը 9:30-11:00
6-14 տարեկան մանուկներու համար:



2025-2026 Տարեշրջանի արձանագրութեան համար կրնաք դիմել այցելելով հետեւեալ կայքէջը՝
https://forms.gle/AdUL2LnkvBAXKC6U9

«Թոյլ տուէք այդ մանուկներուն որ ինծի գան» ղկ. 18:16